



**ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարությունը հիմա**

**Իրականացման ժամանակահատված:** 01.02.2021 - 31.01.2024

**Այլ երկրներ:**  
Armenia

**Ընդհանուր բյուջե:** € 500 000

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**  
Eurasia Partnership Foundation, Armenia (EPF Armenia)



**Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:**  
[facebook.com/EPFArmenia](https://facebook.com/EPFArmenia)

**Նախագծի կայքէջ:** [epfarmenia.am/project/EU4Youth-Student-Democracy-Now](http://epfarmenia.am/project/EU4Youth-Student-Democracy-Now)

**Նախագծի նկարագրություն:**

«ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Հայաստանում Եվրասիա համագործակցության հիմնադրամը (ԵՀՀ-Հայաստան), «Ռեստարտ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի («Ռեստարտ» հիմնադրամ) և Հայաստանում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ-Հայաստան) հետ կոնսորցիումի շրջանակներում իրականացնում են նախագիծը 2021 թ. փետրվարի 1-ից: Ծրագրի տևողությունը 36 ամիս է, որի ընդհանուր բյուջեն կազմում է 500,000 եվրո:

«ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարությունը հիմա» ծրագիրը նպատակ ունի պաշտպանելու երիտասարդների իրավունքները, ինչպես նաև ուժեղացնելու ուսանողների և ուսանողական կազմակերպությունների կարողությունները՝ հանրային գործերում նրանց ներգրավմանը խրախուսելով:

Ծրագիրն անդրադառնում է մարտահրավերների լայն շրջանակի, որոնց հետ բախվում են հայ երիտասարդները, սկսած ուսանողական խորհրդի մանդատների և գործառույթների մասին իրենց անտեղյակությունից, մինչև իրենց՝ նոր կրթական համակարգի զարգացմանն ուղղված քաղաքականության քննարկումներին և մշակմանը նշանակալի մասնակցությունից: Խոսքը վերաբերում է այնպիսի կրթական համակարգին, որը նպաստում է ակտիվ քաղաքացիական դիրքորոշմանն, հաշվի է առնում ուսանողների ձայնը՝ որպես կրթական

**Ակնկալվող արդյունքներ:**  
Ակնկալվող արդյունքները

- Ուսանողների, ուսանողական կազմակերպությունների և երիտասարդական ՔՀԿ-ների կարողությունների բարձրացում քննադատական մտածողության, կազմակերպական և սոցիալական հմտությունների, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների ոլորտներում: Ավելի քան 400 երիտասարդներ, ներառյալ ուսանողներ և ուսանողական կազմակերպություններ կընդլայնեն իրենց գիտելիքներն ու հմտությունները կազմակերպչական զարգացման, ջատագովության/ադվոքատի, իրավունքի պաշտպանության, համալսարանի մասնակցային կառավարման և ուսանողակենտրոն կրթության մշակման ոլորտներում: Վաթսուկ երիտասարդներ Հայաստանի բոլոր մարզերից կուսուցանվեն՝ ինչպես զարգացնել առցանց և օֆլայն գործիքներն, որոնք կխթանեն ուսանողական ինքնակազմակերպման նոր և նորարարական ձևերին, կրթությանը, քաղաքացիական ներգրավմանը, համալսարանի կառավարման մասնակցությանը, որոշումների կայացմանը և քաղաքականությունների զարգացմանը: Կմշակվեն 3-5 նորարարական էլեկտրոնային գործիքներ՝ ուսանողական ինքնակազմակերպման որակի բարձրացման, համալսարանների թափանցիկության, հաշվետվողականության և ուսանողների՝ ջատագովության/ադվոքատի, քաղաքականությունների մշակման և համալսարանական կառավարմանը մասնակցելու համար: Մարզային համալսարաններից 150-200 ուսանողներ, երիտասարդ ակտիվիստներ և ուսանողական, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ